



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՈՂՁՅԱՆ 7  
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70  
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

**ՈՐՈՇՈՒՄ N° 35**

17-ը հունվարի 2022թ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Աշոտ Հովհաննիսյան ԱԶ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճրն համայնքի Չարենցի 16/50 հասցեում գտնվող 21ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով:  
Հաշվի առնելով, որ ըստ N13307 վճարման հանձնարարագրի դիմումատուն 2022 թվականի համար կատարել է Նոր Հաճրն համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N° 51-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ **որոշում եմ.**

- 1.Տալ Աշոտ Հովհաննիսյան ԱԶ-ին (վկայական 58.904359) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճրն համայնքի Չարենցի 16/50 հասցեում գտնվող 21ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն 2022 թվականի համար:
- 2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ